մանակ է վերացնել ժամոցի այն ձևը՝ ինչպէս որ նա գոյութիւն ունի ներկայումս։

Ուստի և մի արձանագրութեամբ որոշեց վերացնել վարձատրութեան այդ մաշուած ձևը, որից յաճախակի առաջացած ծանր հետևանքների վկայ ենք հանդիսացել մենք և դորան փոխարինել 1, ժամանակաւորապէս, որպէս փորձ, կնքուած տուփ կախելով եկեղեցու դռներից, պատշաճաւոր ծանուցումով,—այս ժամաւորների համար, և 2, տալով իւրաքանչիւր քահանայի ձեռքը մի մի տպագրուած անդորրատետր՝ ամեն մէկը իւր ծրխից տարեկան կամաւոր ժամոցագրամ ստանալու։

Այս կարգադրութիւնը վերաբերում է քահանաներին. իսկ ինչ վերաբերում է՝ սարկաւագների ու դպիրների գանձանակներին՝ նոցա փոխարէն եկեղեցու վարչութիւնը տնօրինեց կրկնապատկել նոցա ռոճիկները՝ կրած զրկանքի փոխարէն։

Վանքի միաբանների այս օրինակելի կարգադրութիւնը յոյս ունենանք, որ արձագանք կգտնէ և միւս եկեղեցիների պաշտօնեաների մէջ, իսկ միւս կողմից պէտք է կարծել, որ հասարակութիւնն էլ տեսնելով իւր իղձերի մարմնացումը՝ կօժանդակէ իւր հովիւներին այն ամեն բարենպատակ գործողութիւնների մէջ, որոնք հակառակ չլինելով հանդերձ Հայաստանեայց ս. եկեղեցու հոգուն՝ միևնոյն ժամանակ նպաստում են եկեղեցու մէջ խիստ կարգապահութիւն պահպանելուն։

ՆՈՒԻՐՆԵՐ

---

1. Բարեգործ պ. Աւետիս Բ. Ղուկասեանը «Լումայ»ի 10 օրինակ նուիրում է Շուշուայ և Երևանի թեմ. Դրպրոցներին, թիֆլ. երկաթուղու բանուորների գրադարանին,

կ. Պոյսի Ազգային կենդրոնական մատենադարանին և Խարկովի, Պ. Բուրգի. Մոսկուայի, Լայպցիգի, Փարիզի ու Օդեսայի հայ ուսանողների գրադարաններին։

2. Բարեգործ պ. Առաքել Ծատուրեանը նպաստ է ուղարկել «Լումայ»ի հրատարակութեան մի հարիւր ռուբլի։ Խմբագրութիւնը յայտնում է իւր շնորհակալութիւնը։

3. Բագուից՝ պ. Բուղդան Դօլուխանեանը մի օրինակ թողնում է խմբագրութեան տնօրինութեան, որ ուղարկուեց Թիֆլիզի էժանագին գրադարանին։

4. Բագուից՝ պ. Մկրտիչ Շահկերտանեանը 2 օրինակ «Լումայ» նուիրեց 1. Դերբէնդի քաղաքային ուսումնարանին և 2. Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան մատենադարանին։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ծոցի օրացոյց ս. Երուսաղէմի. 1898.

Նուէր մանուկներին. Էրգոլսկայա. Գիւղում. Թարգմ. Տփխիս 1898

— Ուիդա. Նելլօն ու պատրաշը. Թարգմ. Տփխիս 1897.

— Անդրէևա. Աղքատի բախտը. Թարգմ. Տփխիս 1896.

— Շմիդտ. Առաջին վիշտ. Թարգմ. Տփխիս 1896.

— Սմիրնովա. Անտառապահը. Թարգմ. Տփխիս 1896.

Ցարոյ. Նկարներ. Տփխիս 1898.

Մարաղեան Տ. Քէ. Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը, Բագու. 1898.

Սահակեան Ս. Քէ. ուսումն քրիստոնէական կրօնի. Տփխիս. 1898.

Ս. Հ. (Թարգմ.) Շէլլուի սպանութիւնները. Տփխիս. 1898.

» » Պրոֆ. Ն. Մարր. Վրացի պօէտ Ակակին Հայերի մասին. Տփխիս 1898.

Հաշիւ խնամարկութեան հոգևորականաց Ն. Նախիջևանի և շրջակայ 6 գիւղորէից նորին վասն 1897 ամի. Ռոստով 1898.

Մկրտումեան Գ. Քէ. (փոխ.) Տաճիկ փաշա. Բուլգար միանձ-